

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱԿՈՐԿԱԾ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2014 թվականի

թիվ 11/9

քաղ. երևան

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապրանքների միասնական դասակարգման և Մաքսային միության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթների իրականացման նպատակներով՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան **որոշեց՝**

1. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՍՀԿ-ի, Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից հետևյալ որոշումների կամ պարզաբանումների ընդունումը համաձայնեցնել՝

1.1. Սև մետաղներից փայտամածված անկեր, որն իրենից ներկայացնում է պտուտակավոր արմատուրային գլանվածք, որի կողերն անցնում են պտուտակավոր գծով և ծառայում են ոչ միայն բետոնի հետ կցորդման, այլև առանցքները միմյանց և այլ դետալների հետ միացման համար՝ հատուկ ներքին պարույրով պտուտակամերների և կցորդիչների օգտագործմամբ, դասակարգվում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 7318 ապրանքային դիրքում՝ ԱՏԳ ԱԱ-ի 1-ին մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

1.2. Դեկորատիվ մասին ամրացված՝ մշտական մազնիս հանդիսացող ներկառուցված մագնիսով հուշանվերային արտադրանքը դասակարգվում է դեկորատիվ բաղադրիչի պատրաստման նյութի համաձայն՝ ԱՏԳ ԱԱ-ի 3 (բ) մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

1.3. Թղթային թերթի, պաստառի տեսքով վերարտադրանկարը, որի վրա տպագիր եղանակով պատկերված են պատկերներ՝ առանց բացատրական տեքստի, ներկայացված փայտե շրջանակի հետ, որի արժեքը և բնույթը համապատասխանում են վերարտադրանկարի արժեքին և բնույթին, դասակարգվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 4911 ապրանքային դիրքում՝ ԱՏԳ ԱԱ 3 (բ) մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան, քանի որ նշված ապրանքի հիմնական հատկանիշները պայմանավորված են անմիջապես վերարտադրանկարով:

Թղթային թերթի, պաստառի տեսքով վերարտադրանկարը, որի վրա տպագիր եղանակով պատկերված են պատկերներ՝ առանց բացատրական տեքստի, ներկայացված փայտե շրջանակի հետ, որի արժեքը և բնույթը զգալիորեն գերազանցում է վերարտադրանկարի արժեքը, դասակարգվում է առանձին՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 4911 ապրանքային դիրքում, իսկ վերարտադրանկարի հետ առաքվող շրջանակը դասակարգվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 4414 ապրանքային դիրքում՝ ԱՏԳ ԱԱ-ի 1-ին մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

1.4. Չլեգիրացված պողպատից տարողություն՝ մետաղական բալոն, ներկված կարմիր գույնով, վերին հատվածում պարուրակ ունեցող տեխնոլոգիական անցքերով, 2,3 լիտր տարողությամբ, 1 մմ պատի հաստությամբ, նախատեսված կրակմարիչ նյութով լցվելու համար, դասակարգվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 7310 ապրանքային դիրքում՝ ՄՄ ԱՏԳ 1-ին մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

2. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՍՀԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ մինչև 2014 թվականի օգոստոսի 10-ը պատրաստել 1.1 - 1.4 կետերում նշված ապրանքների դասակարգման մասին որոշման նախագծեր կամ պարզաբանումներ:

Նախագահի տեղակալ՝
Նախագահի տեղակալ՝
Ռուսաստանի ԴՄԾ-ի ղեկավարի առաջին
տեղակալ, Միավորված կոլեգիայի անդամ՝

Ա.Ֆ. Շախլևսկի
Գ.Կ. Ամրին

Վ.Ս. Մալինին